

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐՎԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ
ГОСУЧРЕЖДЕНИЙ
АРМЕНИИ



UNION OF STATE, LOCAL
GOVERNMENT AND PUBLIC SERVICE
EMPLOYEES OF ARMENIA

«21» հունվար 2021 թ.

N 04-01

**Երևանի քաղաքապետ
պարոն Հայկ Մարությանին**

Հարգելի պարոն քաղաքապետ

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատողները 2020 թվականի մեծ մասն աշխատել են սովորականից տարբերվող՝ արտակարգ և ռազմական դրությունների դժվարին ու առողջության համար վնասակար պայմաններում, որոշ դեպքերում գերձանրաբեռնված՝ կատարելով լրացուցիչ պարտականություններ և արտաժամյա աշխատանք:

Հանդիսանալով այն առաջնային օղակը, որն անմիջականորեն շփման մեջ է եղել քաղաքացիների հետ՝ շատերը վարակվել են COVID-19-ով և ստիպված են եղել ինքնուրույն հոգալ իրենց և իրենց ընտանիքների անդամների հիվանդության բեռը և բուժման համար շատ դեպքերում ծախսել են աշխատավարձի չափը գերազանցող գումարներ: Աշխատակիցների մեծ մասը անձնական ներդրումներ են ունեցել ՀՀ և Արցախի սահմանների պաշտպանության մեջ՝ աշխատավարձերից գումարներ փոխանցելով տարբեր նախաձեռնություններին և հոգեբանական ու նյութական աջակցություն են ցուցաբերել առաջնագիծ մեկնող հարազատներին և ընկերներին:

Դրա հետ մեկտեղ երկու ճգնաժամերը հանգեցրել են տնտեսական վիճակի վատթարացման, դրամի արժեզրկման, դրա հետևանքով առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացման, ինչն առաջացրել է լրացուցիչ սոցիալական խնդիրներ աշխատողների համար:

Մինչդեռ Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների աշխատավարձի բարձրացում 8 տարի տեղի չի ունեցել, այդ տարիների ընթացքում զգալի գնաճ է տեղի ունեցել, որն արժեզրկել է աշխատավարձը գրեթե 20%-ով, այդ տարիների ընթացքում աշխատողների վրա ավելացել է նաև բեռ՝ կուտակային կենսաթոշակի համար վճարումների տեսքով:

Չնայած վերոշարադրյալին՝ սկսած երրորդ եռամսյակից աշխատակիցները չեն ստացել Երևանի բյուջեով և Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված պարգևավճարներ, որոնք ստեղծված իրավիճակում, ըստ էության, աշխատավարձի մաս են կազմում:

2021 թվականի հունվարից ուժի մեջ է մտել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով աշխատողների վրա ևս մեկ ֆինանսական բեռ է ավելանում:

Առաջնորդվելով Աշխատանքային Օրենսգրքի հոդված 25-ով և 26-ով, ինչպես նաև «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ով՝ առաջարկում ենք մինչև աշխատավարձերի բարձրացումը վճարել աշխատողներին լրավճարներ՝ սոցիալական լարվածությունը մեղմելու և աշխատողներին մոտիվացնելու նպատակով:

Հարգանքով՝
ՃՀՄ նախագահ



Ա. Ասատրյան